

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 31-ի N 1068-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

*Սույն հավելվածով նախատեսված միջոցառումները դիտարկվելու են ռազմավարությամբ հաղակեցված ժամանակահատվածի համար, և վերջինների ֆինանսավորման հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջեմասշտաբի գործընթացի շրջանակներում՝ հաշվի առնելով ինչպես միջոցառումների առաջնահերթությունները, այնպես էլ օրենքով չարգելված այլ աղբյուրները և հարկաբյուջեմասշտաբի սահմանափակումները:

**Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի մշտադիտարկման թիրախային ցուցանիշները ներկայացված են սույն հավելվածի Աղյուսակ 1-ով



Դասակարգիչ	Ծրագիր/միջոցառում	Նշումներ ծրագրի/միջոցառման մասին	Պատասխանատու մարմին	Ժամանակացույց						Ֆինանսավորում, ՀՀ դրամ					
				2025	2026	2027	2028	2029	2030	2025	2026	2027	2028	2029	2030
V	Արտահանման վրա հիմնված փոքրահասկան աճի խթանման միջոցով նպաստել երկրի քանկության բարեկեցության աճին և փոքրատնտեսության կայուն զարգացմանը:									1,065,100,000	1,535,800,000	6,549,000,000	12,375,800,000	38,333,900,000	38,816,100,000
Հիմնայուն 1	Արտահանմանը նպաստող մրցունակ միջավայրի ապահովում									110,800,000	313,060,000	443,650,000	489,590,000	697,620,000	820,420,000
P.1.1	Արտահանման նկատմամբ «համակառավարական» (whole-of the government) մոտեցում									110,800,000	90,000,000	13,000,000	13,000,000	13,000,000	13,000,000
M1.1.1	Ձևավորել Արտահանման խորհուրդ, որը պատասխանատու է արտահանման ռազմավարության իրականացման մշտադիտարկման ու գնահատման, տարբեր ոլորտների ռազմավարությունների հետ համապատասխանեցման և ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների լուծման համար	Հաշվի առնելով, որ արտահանման ռազմավարության իրականացումը պահանջում է տարբեր պետական կառույցների համակարգում, պետք է ստեղծվի վարչապետին կից Արտահանման խորհուրդ: Նման խորհրդի օրինակ է Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհուրդը, որը ձևավորվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի ապրիլի 4-ի 347-Ս որոշման համաձայն (տես՝ https://www.e-gov.am/decrees/item/20034/): Արտահանման խորհուրդը ղեկավարելու է ՀՀ վարչապետը կամ փոխվարչապետներից մեկը: Խորհրդում ընդգրկվելու են Էկոնոմիկայի, Արտաքին գործերի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Քարտուղարությունն իրականացնելու է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը: Արտահանման խորհրդի գործառնությունները ներառելու են ռազմավարական ծրագրի իրականացման առաջընթացի մշտադիտարկումն ու գնահատումը և ռազմավարության իրականացման հետ կապված խնդիրների լուծումը:	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	0	0

ML1.2	Ձևավորել Արտահանման խորհրդակցական խումբ (Export advisory board) մասնավոր շահակիցների և գործարար միությունների մասնակցությունն ապահովելու համար	Արտահանման ռազմավարության հաջող իրականացման համար կարևորվում է մասնավոր շահակիցների ներգրավվածությունը: Սույն միջոցառման նպատակն է ստեղծել Արտահանման խորհրդակցական խումբ, որի նպատակն է ներկայացնել և քննարկել փաստաին առաջարկություններ: Խմբում կարող են ներգրավվել առաջատար արտահանողներ, փորձագետներ և գործարար միությունների ներկայացուցիչներ: Այս խորհուրդը գործելու է որպես մասնագիտացված մարմին՝ կազմված, օրինակ՝ լավագույն 5 արտահանողներից, փորձագետներից, բիզնես ասոցիացիաներից և այլն: Խորհրդակցական խումբը կարող է բաղկացած լինել 13 անդամից՝ փոխվարչապետի նախագահությամբ. Էլեոնտմիկայի նախարարությունն ապահովելու է քարտուղարությունը: Խորհրդակցական խումբը ներգրավվելու է քարձր մակարդակի որոշումների կայացման գործում. նրա առաջնային դերը ենթադրելու է արտահանման հետ կապված հարցերի վերաբերյալ քարձր մակարդակի խորհրդատվության և ուղղորդման տրամադրում՝ ապահովելով, որ Արտահանման խորհրդի որոշումների կայացման գործընթացում որոշում կայացնողներն իրազեկված լինեն տարբեր հեռանկարների և շուկայի մասին նորությունների, նոր մարտահրավերների և ռազմավարության իրականացման ազդեցության մասին: Վերահսկելով արտահանման քաղաքականության և ռազմավարությունների իրականացումը՝ Խորհրդակցական մարմինն օգնելու է դրանք համապատասխանեցնել ալելի լայն պետական տնտեսական նպատակների՝ միաժամանակ վերահսկելով կատարողականի ցուցանիշները, գնահատելով դիսկերը և առաջարկելով անհրաժեշտ ճշգրտումներ:	Էլեոնտմիկայի նախարարություն								0	0	0	0	0	0
ML1.3	Ներդնել համապատասխան վիճակագրության հավաքագրման համակարգ՝ ծառայությունների արտահանումը հաշվարկելու համար	Այս միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի գործիքակազմ՝ ծառայությունների արտահանման տվյալներն արդյունավետ կերպով չափելու ու օգտագործելու համար: Այն կարող է ոչ միայն բարելավել տնտեսական հաշվետվողականության ճշգրտությունը, այլև մեծացնել ծառայությունների ոլորտի իրազեկ քաղաքականություն մշակելու կարողությունը: Նման հավաքագրման համակարգի ստեղծումն ու ներդրումը պահանջում է շարունակական և մասնագիտացված ջանքեր՝ ապահովելու թե՛ ճշգրտությունը, թե՛ արդյունավետությունը: Հայաստանի հետ համադրելի երկրներում կան լավագույն փորձի օրինակներ, որոնք կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել այս հավաքագրման համակարգի ստեղծման համար:	Վիճակագրական կոմիտե, Պետական եկամուտների կոմիտե, Էլեոնտմիկայի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Ջրուաշրջության կոմիտե							76,800,000	72,000,000	0	0	0	0	0
ML1.4	Իրականացնել տարեկան հարցում արտահանողների և լոգիստիկ կազմակերպությունների շրջանում	Այս միջոցառման իրականացման արդյունքում կստեղծվի գործիքակազմ՝ ծառայությունների արտահանման տվյալներն արդյունավետ կերպով չափելու ու օգտագործելու համար: Այն կարող է ոչ միայն բարելավել տնտեսական հաշվետվողականության ճշգրտությունը, այլև մեծացնել ծառայությունների ոլորտի իրազեկ քաղաքականություն մշակելու կարողությունը: Նման հավաքագրման համակարգի ստեղծումն ու ներդրումը պահանջում է շարունակական և մասնագիտացված ջանքեր՝ ապահովելու թե՛ ճշգրտությունը, թե՛ արդյունավետությունը: Հայաստանի հետ համադրելի երկրներում կան լավագույն փորձի օրինակներ, որոնք կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել այս հավաքագրման համակարգի ստեղծման համար: Արտահանող ընկերությունների շրջանում պետք է անցկացվի տարեկան կանոնավոր հարցում: Նման հարցումների օրինակներ են՝ Միջազգային առևտրի վարչության տարեկան հարցումը (Մեծ Բրիտանիա) (տես https://www.gov.uk/government/publications/departement-for-international-trade-annual-report-and-accounts), Առևտրի հանձնակատարի ծառայության հաճախորդների գոհմանության հարցումը (Կանադա): Այս հարցման մեթոդաբանությունը պետք է մշակվի՝ ուսումնասիրելով միջազգային լավագույն փորձը:	Էլեոնտմիկայի նախարարություն							34,000,000	18,000,000	13,000,000	13,000,000	13,000,000	13,000,000	13,000,000
P1.2	Միջազգային առևտրային հարաբերություններ և համաձայնագրեր									0	92,250,000	229,270,000	169,090,000	180,360,000	195,080,000	

MI.2.1	Մշակել և ԵԱՏՄ խորհրդյին ներկայացնել 'որ երկրների հետ բազմակողմ ազատ առևտրի համաձայնագրերի առաջարկներ	Ներկայիս աշխարհաքաղաքական համատեքստում, որտեղ առևտրային հարաբերությունները գնալով ավելի բարդ են դառնում	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							0	0	0	0	21,830,000	33,390,000
MI.2.2	Սկսել բանակցություններ Առևտրի և Ներդրումների վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի շուրջ՝ ԵԱՏՄ շրջանակներում ստանալու հատուկ կամ ճկուն կարգավիճակ՝ ընդգծելով դրա յուրահատուկ տնտեսական կարիքներն ու հնարավոր օգուտներն ինչպես Հայաստանի, այնպես էլ ԵԱՏՄ-ի համար	Հիմք ընդունելով թիրախային շուկաները, որոնք բացահայտվել են վերլուծության արդյունքում, երկկողմ համաձայնագրերի համար դիտարկելի են հետևյալ շուկաները. Տարածաշրջանային երկրներ- Իրան, Վրաստան, Թուրքիա Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ) Ծոցի երկրներ Եվրոպական տնտեսական տարածք (ԵԱՄ) և Հվեյցարիա Հունկոզ Ճապոնիա ԱՄՆ, Իսրայել Միեզգալոր Կորեայի Հանրապետություն Միացյալ Թագավորություն	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							0	0	92,640,000	59,430,000	26,830,000	27,360,000
MI.2.3	Դյուրացնել առևտուրը մեծ ներուժ ունեցող տնտեսությունների հետ, ինչպիսիք են Ծոցի երկրները, Ճապոնիան և Կորեան՝ կենտրոնանալով այն ոլորտների վրա, որտեղ Հայաստանն ունի համեմատական առավելություն	Վարել բանակցություններ առևտրի դյուրացման միջոցառումների շուրջ մեծ ներուժ ունեցող տնտեսությունների հետ: Բազմակողմ ազատ առևտրի համաձայնագրերի բարդությունից խուսափելու համար անհրաժեշտ է դիտարկել երկկողմ քննարկումները, որոնք հավասարակշռում են ազգային շահերը տարածաշրջանային պարտավորությունների հետ (օրինակ՝ ԵԱՏՄ)՝ դիվանագիտական ջանքերի միջոցով: Տրված չափման համար պետք է հաշվի առնվեն նշված 25 առաջնային ապրանքները և այդ ապրանքների համար նշված հնարավոր արտահանման շուկաները:	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							0	92,250,000	82,150,000	66,270,000	60,620,000	61,830,000
MI.2.4	Անցկացնել երկկողմ քննարկումներ ԵԱՏՄ այլ անդամ երկրների հետ՝ հատուկ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերի իրականացման հարցում աջակցություն ստանալու նպատակով՝ ԵԱՏՄ-ին անդամակցության լծակն օգտագործելով ապահովելու տարածաշրջանային համագործակցությունը և ինտեգրման ամրապնդումը	Տվյալ միջոցառման համար պետք է հաշվի առնել բացահայտված 25 առանցքային ապրանքները և տվյալ ապրանքների համար բացահայտված արտահանման հավանական շուկաները:	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							0	0	0	0	39,250,000	40,040,000
MI.2.5	Անցկացնել երկկողմ քննարկումներ այլ միջազգային բազմակողմ կազմակերպությունների հետ (ԱՀԿ, ԱՊՀ)՝ առկա խնդիրների արդյունավետ հասցեացումն և գործընթացների լավարկման նպատակով	Հաշվի առնելով ԵԱՏՄ-ի հետ աշխատանքի և բանակցությունների նշանակությունը Հայաստանի արտահանման ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման ապահովման գործում՝ կարևոր է համակարգված կերպով անդրադառնալ ԵԱՏՄ-ի հետ կապված հարցերին: Նշվածը ներառում է թե՛ ԵԱՏՄ-ում Հայաստանի ներկայացուցչության շրջանակը, թե՛ ներգրավված համապատասխան մարմինների (Էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանում) գործունեությունը:	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							0	0	54,480,000	43,390,000	31,830,000	32,460,000
PI.3	Կանոնակարգերի և վարչարարության բարելավում									0	130,810,000	201,380,000	307,500,000	504,260,000	612,340,000
MI.3.1	Իրականացնել արտահանման գործընթացների մանրամասն պարբերական գնահատում՝ բացահայտելու և նվազեցնելու վարչարարական խոչընդոտները	Ձևավորել զգայուն ապրանքների յուրահատուկ րնութագրերը հաշվի առնող կարգավորման ավելի հուսալի շրջանակ և արտահանման հսկողության	Էկոնոմիկայի նախարարություն							0	130,810,000	101,380,000	35,360,000	33,340,000	34,010,000

M1.3.2	ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման համատեքստում մշակել և բանակցել Գործընկերության նոր օրակարգ փաստաթուղթում արտաքին առևտրի ոլորտում Հայաստանի համար առավել բարենպաստ պայմաններ ենթադրող առաջարկներ	ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման համատեքստում ներկայումս բանակցության փուլում է գտնվում Գործընկերության նոր օրակարգ փաստաթուղթը, որն ուղղված է ՀՀ-ԵՄ տնտեսական և արտաքին հարաբերությունների լայն շրջանակի ձևավորմանը: Գործընկերության նոր օրակարգ փաստաթղթի՝ առևտրին առնչվող հատվածները համահունչ են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ներառված դրույթներին: Առևտրի ոլորտում առավել լայն համագործակցությունը ենթադրում է ազատ առևտրի գոտու ստեղծում, որը հանդիսանում է համագործակցության այլ՝ ասոցացման ձևաչափ:	Արտաքին գործերի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Վարչապետի աշխատակազմ (Փոխվարչապետի գրասենյակ)								0	0	0	152,140,000	144,270,000	118,720,000
M1.3.3	Իրականացնել առանցքային ապրանքների արտադրության, պիտակավորման և արտահանման ավելի արդյունավետ վերահսկողություն համապարփակ համակարգի ներդրման միջոցով, որը ներառում է նշված գործընթացներում որակի անհրաժեշտ չափանիշներին ու կարգավորող պահանջներին համապատասխանության ապահովման ընթացակարգերը և բիզնես գործընթացները	Այս միջոցառման նպատակն է մշակել և ստեղծել համապարփակ համակարգ, որը երաշխավորում է, որ Հայաստանից արտահանվող ապրանքները լիովին համապատասխանում են անհրաժեշտ որակի չափանիշներին ու կարգավորող պահանջներին: Այս ստանդարտների պահպանումն ապահովելու պատասխանատվությունը կրում են ոչ միայն հայկական ապրանքներ ներկրողները, այլ նաև Հայաստանը՝ որպես արտահանող երկիր: Հայկական արտահանման որակի և կանոնակարգման հետ կապված խնդիրների լուծումը շատ կարևոր է, քանի որ այս ստանդարտներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել լուրջ հեղինակության ռիսկերի, ինչպես նաև Հայաստանի համար համաշխարհային շուկայում այլ հետևանքների: Այս նախաձեռնությունն ուղղված է երաշխավորելու, որ հայկական արտադրանքը թավաբարում է հիմնական առաջնաներթ արտահանման շուկաների խիստ պահանջներին՝ դրանով իսկ նպաստելով շուկայի արդյունավետ ենթափանցմանը և պահպանելով Հայաստանի մրցակցային առավելությունն այս երկրներում:	Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն								0	0	100,000,000	120,000,000	100,000,000	80,000,000
M1.3.4	Ներդնել հետազոնելության միջոցներ, ինչպիսիք են յուրահատուկ նույնացուցիչները կամ QR կոդերը, որոնք կարող են թույլ տալ սպառողներին և կարգավորող մարմիններին հետևել յուրաքանչյուր միավոր ապրանքի ծագմանն ու արտադրության գործընթացին		Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	126,650,000	129,610,000
M1.3.5	Ձևավորել զգայուն ապրանքների յուրահատուկ բնութագրերը հաշվի առնող կարգավորման ավելի հուսալի շրջանակ և արտահանման հսկողության մեխանիզմներ՝ միտված ապրանքների կամ երկակի նշանակության ապրանքների արտահանման բիզնես գործընթացների բարելավմանը՝ առաջնաներթ ուղադրություն դարձնելով համապատասխանությանը, թափանցիկությանը և համագործակցությանը	Հուսալի կարգավորող շրջանակը կարող է նվազագույնի հասցնել գործառնական ընթերցումը, եթե այն լավ կազմակերպված և արդյունավետ կերպով ներդրվի: Այստեղ հիմնական գաղափարը ոչ միայն կարգավորող շրջանակի հուսալիությունն է, այլև այն, թե որքանով է այն ինտեգրված բիզնես միջավայրին: Մշակման ընթացքում, հաշվի առնելով արդյունավետությունը, հուսալի կարգավորող շրջանակը կարող է երաշխավորել հիմնական ստանդարտների համապատասխանությունը՝ առանց նվազեցնելու աշխատանքի արտադրողականությունը: Ստորև ներկայացված են դրա հետ կապված մի քանի կարևոր կետեր: Պարզություն և հասանելիություն. եթե կանոնակարգերը պարզ են, հակիրճ և հասկանալի, ձեռնարկությունների համար ավելի հեշտ կլինի հասկանալի և հետևել դրանց: Սա նվազեցնում է բարդ իրավական ձևակերպումները վերծանելու համար ծախսված ժամանակը և թույլ է տալիս դրանք ավելի արագ ներդնել առօրյա գործունեության մեջ: Արդյունավետ գործընթացներ. համակարգը, որը ներառում է օպտիմալացված գործընթացներ, ինչպիսիք են էլեկտրոնային գրանցման և ավտոմատացված հաշվետվությունների համակարգերը, կարող է զգալիորեն կրճատել համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ ժամանակը: Այս արդյունավետությունը նվազագույնի է հասցնում գործարքի ծախսերը՝ միաժամանակ ապահովելով, որ բոլոր կանոնակարգերը պահպանվեն: Աջակցություն և հրահանգավորում. ձեռնարկություններին հստակ ուղղորդման, վերապատրաստման և աջակցության տրամադրումը կարող է օգնել նրանց ավելի արդյունավետ կողմնորոշվել կարգավորող դաշտում: Նման նախաձեռնողական մոտեցումը նվազեցնում է փորձությունների և սխալների, ինչպես նաև տույժերը չկատարելու պատճառով ծախսված ժամանակը: Պարբերաբար թարմացումներ և ճկունություն. համակարգը, որը պարբերաբար թարմացվում է և բավականաչափ ճկուն է բիզնեսի փոփոխվող պայմաններին հարմարվելու համար, կարող է կանխել խափառումների/իջմանումների առաջացումը: Երբ կանոնակարգերը համահունչ են տնտեսության ընթացիկ պրակտիկային, ձեռնարկությունները կարող են անխափան գործել՝ առանց անընդհատ ճշգրտումների:	Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	0	0

MI.3.6	Ներդնել զգայուն ապրանքներին արտահանման ողջ գործընթացում հետևելու և հետագծելու առաջադեմ տեխնոլոգիաներ ու ենթակառուցվածքներ, որոնք կրթարձագներն թափանցիկությունը և հաշվետվողականությունն ու ինտեգրված կլիմեն տվյալ երկրների հետ	Միջոցառումը ենթադրում է արտահանման ողջ գործընթացին հետևելու և մշտադիտարկման համապարփակ համակարգ՝ նախապատրաստման օկզբնական փուլերից մինչև ապրանքների վերջնական առաքումը: Միջոցառման նպատակն է ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն արտահանման բոլոր փուլերում՝ դրանով իսկ պարզեցնելով գործընթացը և ապահովելով ավելի սահուն գործառնություններ ու համապատասխանություն բոլոր կանոնակարգերին: Որոշ օրինակներ, որոնք կարող են ծառայել այս նպատակին, ներկայացված են ստորև. Ռադիոհաճախականության նույնականացում (RFID), Գլոբալ տեղորոշման համակարգ (GPS), Իրերի ինտերնետ (IoT), Բլոկչեյն տեխնոլոգիա, Էլեկտրոնային տվյալների փոխանակում (EDI), Ընդլայնված հետագծման ծրագրակազմ:	Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	88,000,000	160,000,000
MI.3.7	Աֆիազման և անդամակցության սկզբունքով միանալ և համագործակցել առաջատար միջազգային ինստիտուտների և/կամ կազմակերպությունների հետ, որոնք ակտիվորեն ներգրավված են ընտրված առաջնային ապրանքների թվում առկա քվալի բորայական ապրանքների հետ կապված գործունեության մեջ	Միջոցառումը կենտրոնանում է առաջնահերթ 25 ապրանքային խմբերի հետ ամփյակատրեն կապված առաջատար միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ կապերի և անդամակցության վրա: Միջազգային կառույցներին անդամակցությունը ռազմավարական նպատակ ունի բարձրացնելու Հայաստանի՝ իր առաջնահերթ ապրանքների հետ կապված տեսանկյունով: Մասնակցելով այս գլոբալ հարթակներին՝ Հայաստանը բարձրացնում է իր միջազգային ճանաչումը՝ ապահովելով ավելի լայն հասանելիություն դեպի շուկա և ամրապնդելով իր ներկայությունը միջազգային շուկայում: Այս ներգրավվածությունը ոչ միայն խթանում է հայկական արտադրանքի ճանաչելիությունն ավելի լայն լսարանի համար, այլ նաև ստեղծում է արժեքավոր ցանցային ինտերակտություններ, ռազմավարական գործընկերություններ և ոլորտի մասին պատկերացումների հասանելիություն: Ավելին, այն նպաստում է Հայաստանի ջանքերին՝ ապահովելով բարենպաստ քաղաքականության և չափանիշների պաշտպանությանը, ինչը, ի վերջո, նպաստում է արտահանման աճին, ներդրումների ներգրավմանը և ընդհանուր տնտեսական զարգացմանը: Օրինակներից մի քանիսը ներառում են, քայց չեն սահմանափակվում հետևյալով. Մոլիբդենի միջազգային ասոցիացիա (IMO) Ցինկի միջազգային ասոցիացիա Մաքուր և կիրառական քիմիայի միջազգային միություն Պղնձի միջազգային ասոցիացիա	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	12,000,000	90,000,000
MI.3.8	Վերանայել Առևտրաբարդյունաբերական պալատների մասին ՀՀ օրենքը՝ ծագման հավաստագրերի արժանահավատության և համապատասխանության շարունակական ապահովման նպատակով		Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	0	0
MI.3.9	Ձևավորել ծագման հավաստագրերի տրամադրման գործընթացի մշտադիտարկման համակարգ՝ դրա շարունակական բարելավման նպատակով		Էկոնոմիկայի նախարարություն												
Հիմնադրոն 2	Ենթակառուցվածքների զարգացում և լոգիստիկ հասանելիության ապահովում									349,260,000	326,676,800	3,032,761,000	7,281,115,700	15,580,126,200	12,931,371,500
P2.1	Ենթակառուցվածքների զարգացում									252,660,000	151,716,800	348,401,000	361,275,700	457,886,200	459,351,500

M2.1.1	Սահմանել հստակ նպատակներ և մշակել գործողությունների ծրագիր՝ դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խմբին մասնակցելու համար՝ Հայաստանի առևտրի դյուրացման և լոգիստիկ խնդիրները լուծելու նպատակով	Այս միջոցառումն ընդգրկում է դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խմբի շրջանակներում աշխարհագրական տեղադիրքի ու դրա հետ փոխկապակցված լոգիստիկ հնարավորությունների մասով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների համապարփակ ակնարկի ներկայացումը, խմբի հանդիպումների ընթացքում աշխատանքի և բանակցությունների օրակարգի ձևավորումը, Հայաստանի կատարած գործունեության ու աշխատանքի վերաբերյալ զեկուցի մշակումը և այլն: Միջոցառումը նպատակ ունի արդյունավետորեն լուծել նշյալ մարտահրավերները և աշխատել համապատասխան մարմնից աջակցություն ստանալու ուղղությամբ՝ օգտագործելով այս աջակցությունը Հայաստանի տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավմանը նպաստելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտահանման կարողությունների խթանմանը:	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	59,720,000	55,570,000	36,070,000	36,790,000
M2.1.2	Բարելավել տարանցիկ երթուղիներն ու ենթակառուցվածքները և բանակցել արդար ու առավել արդյունավետ տարանցման պայմաններ՝ նպաստելով արտահանման դյուրացմանը	Այս միջոցառման նպատակն է կենտրոնանալ տարանցիկ ուղիների և ենթակառուցվածքների բարելավման վրա: Այս նպատակ ունի խրախուսել անաչատ և արդյունավետ տարանցման պայմանավորվածությունները՝ խթանելով համագործակցությունը հարևան երկրների և միջազգային գործընկերների հետ: Տվյալ միջոցառումը կարող է ներառել, քայք չսահմանափակվել հետևյալով. Թարմացնել տարանցիկ երթուղիները, նշվածը ենթադրում է ներդրումների կատարում ավելի լավ ճանապարհներում և տրանսպորտային համակարգերում: Ապահովել արդար տարանցում, այս մասով անհրաժեշտ է համոզվել, որ բոլորը հետևում են ապրանքների տեղափոխման անաչատ կանոններին: Երկկողմ և քաղմակողմ համաձայնագրեր, նշվածը ենթադրում է բանակցությունների իրականացում հարևան երկրների և միջազգային գործընկերների հետ՝ ստեղծելու կամ թարմացնելու համաձայնագրեր, որոնք ապահովում են տարանցման անաչատ և արդյունավետ կարգավորումներ: Շահերի պաշտպանության արշավներ, այս մասով անհրաժեշտ է ջանքեր գործադրել ուղղված շահերի պաշտպանությանը՝ բարձրացնելու միջազգային շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը Հայաստանի համար արդյունավետ տարանցման կարևորության մասին՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը, խրախուսելով նրանց թայլեր ձեռնարկել և այլն:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն							0	0	0	0	63,650,000	64,920,000
M2.1.3	Ներգրավել միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) ներդրումային նոր ծրագրեր՝ արդյունավետ, ապահով և կայուն տարանցիկ նոր ուղիների ստեղծման համար, որոնք կապահովեն կապը Հայաստանի թե՛ ներքսում, թե՛ այլ երկրների հետ	Միջոցառումը կենտրոնանում է ֆինանսական ռեսուրսների ներգրավման վրա՝ լոգիստիկ նոր ուղիներ ստեղծելու համար, որոնք էական նշանակություն ունեն արտահանման արդյունավետությունը բարձրացնելու համար: Հիմնական գաղափարն այն է, որ այս նոր ուղիները նախատեսված են լինելու հաղորդակցությունը և հասանելիությունը բարելավելու համար՝ հեշտացնելով տարբեր շուկաներում ներկայությունն ու ներգրավումը: Սա կարող է հանգեցնել արտահանման ծավալների ավելացմանը, տնտեսական աճին, բիզնեսի ավելի մեծ ինտրավորությունների առաջացմանը և տարածաշրջանների կամ ոլորտների միջև ավելի մեծ ինտեգրմանը:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	80,000,000	110,000,000
M2.1.4	Նախաձեռնել երկկողմ բանակցություններ և կնքել համաձայնագրեր Հայաստանի և Վրաստանի միջև տարանցման ծախսերի վերացման շուրջ	Տվյալ միջոցառումով նախատեսված է պետական մակարդակում բանակցություններ Հայաստանի և Վրաստանի միջև տարանցման ծախսերի վերացման շուրջ և կնքել համապատասխան համաձայնագրեր	Էկոնոմիկայի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն							53,760,000	29,990,000	0	0	0	0
M2.1.5	Նախաձեռնել երկկողմ բանակցություններ և կնքել համաձայնագրեր Հայաստանի և Թուրքիայի միջև՝ ապահովելու հայկական ապրանքների տարանցումը Թուրքիայի տարածքով՝ ապահովելու ԵՄ-Թուրքիա մարային միությանը հասանելիությունը	Թուրքիայի և Հայաստանի սահմանը համարվում է ոչ միայն երկու երկրների, այլ նաև երկու առևտրային միությունների (ԵԱՀՄ՝ և ԵՄ) մարային սահման: Տվյալ ծրագիրը ենթադրում է բանակցությունների խորացում Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների, ինչպես նաև ԵՄ միջև՝ ապահովելու հայկական ապրանքների տարանցումը Թուրքիայի տարածքով:	Արտաքին գործերի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն							0	0	95,560,000	62,400,000	19,400,000	0
M2.1.6	Նախաձեռնել երկկողմ բանակցություններ և կնքել համաձայնագրեր Հայաստանի և Իրանի միջև՝ ուղղված Իրանում վառելիքի գնի տարբերության վճարման պահանջի չեղարկմանը	Տվյալ միջոցառումով նախատեսվում են պետական մակարդակով բանակցություններ Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ փորձելով հասնել Իրանում վառելիքի գնի տարբերության վճարման պահանջի չեղարկմանը	Էկոնոմիկայի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն							0	0	0	0	0	0

M2.1.7	Իրականացնել իրագործելիության ուսումնասիրություններ՝ ուղղված բացահայտված առանցքային ապրանքների շուրջ արտահանմանն ուղղված արդյունաբերական գոտիների (արտահանման իրագործման գոտիների) ստեղծմանը		Էկոնոմիկայի նախարարություն								198,900,000	121,726,800	93,121,000	158,305,700	193,766,200	197,641,500
M2.1.8	Վարել քանակություններ միջազգային կազմակերպությունների հետ՝ խրախուսելու նրանց հիմնադրումը և գործունեությունը Հայաստանում, որը կրերի նրանց գործունեության շուրջ կենտրոնացած արտահանմանն ուղղված արդյունաբերական գոտիների ձևավորմանը		Էկոնոմիկայի նախարարություն								0	0	100,000,000	85,000,000	65,000,000	50,000,000
M2.1.9	Արդյունաբերական գոտու օպերատորին ներկայացվող պահանջների համակարգի ստեղծում	(համաձայն Զբաղվածության ռազմավարական ծրագրի)	Էկոնոմիկայի նախարարություն (Զբաղվածության ռազմավարական ծրագիր) Ֆինանսների նախարարություն													
M2.1.10	Հիմնել արտահանմանն ուղղված արդյունաբերական գոտիներ (արտահանման իրագործման գոտիներ)՝ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համատեղ	(համաձայն Զբաղվածության ռազմավարական ծրագրի)	Էկոնոմիկայի նախարարություն (Զբաղվածության ռազմավարական ծրագիր)													
M2.1.11	Քարտեզագրել առանցքային ապրանքների արտադրության մեջ ներգրավված տեղական խոշոր կազմակերպությունները	Միջոցառումը կենտրոնացած է առաջնահերթ 25 ապրանքների վրա, որոնք բացահայտվել են համապարփակ վերլուծության միջոցով:	Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	0	0
P.2.2	Բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտահանման աջակցության ծրագիր										0	0	143,000,000	175,000,000	180,000,000	200,000,000
M2.2.1	Վերանայել «Տնտեսության արդիականացման» ընթացիկ ծրագիրը՝ ներառելու տարրեր խթաններ և գործիքներ, որոնք ուղղված են խրախուսելու ներդրումները նորագույն տեխնոլոգիաներում և խթանելու նորարարություն մշակույթը	«Տնտեսության արդիականացման» ընթացիկ ծրագիրը չի անդրադառնում այնպիսի կարևորագույն հարցերի, ինչպիսիք ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արդիականության աստիճանը, արտադրության երկիրը, առաջնային կամ երկրորդային շուկայից գնումը, սարքավորման՝ վերջին արտադրության լինելն են: Նախատեսվում է, որ վերանայման արդյունքում տեխնոլոգիայի արդիականությունը կսահմանվի որպես չափանիշ:	Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	0	0
M2.2.2	Ապահովել էլեկտրոնային առևտրի և թվային շուկաների հարթակներին հայ արտադրողների հասանելիությունը	Այս միջոցառման նպատակն է համագործակցել միջազգային առցանց առևտրի և թվային հարթակների հետ՝ աջակցելու հայ արտադրողներին վաճառել իրենց արտադրանքն ամբողջ աշխարհում անմիջապես հաճախողներին:	Էկոնոմիկայի նախարարություն								0	0	143,000,000	175,000,000	180,000,000	200,000,000
P2.3	Լոգիստիկ հասանելիություն շուկաներին										96,600,000	174,960,000	2,541,360,000	6,744,840,000	14,942,240,000	12,272,020,000

M2.3.1	Տրամադրել մասնակի աջակցություն ընկերություններին՝ Հայաստանից դեպի առանցքային թիրախային շուկաներ օդային ճանապարհով բեռնափոխադրումներ իրականացնելու համար՝ արտահանման աճին նպաստելու և տրանսպորտային մատչելիության բարելավման նպատակով: Պահանջարկի աճին զուգահեռ պետության մասնաբաժինը կնվազի:	Թիրախները հաշվարկելու համար օգտագործվել է հետևյալ տրամաբանությունը: Ծոցի արարական երկրներ - քնդիանուր 2 ուղղություն մինչև 2030 թվականը - սկսած 2027 թվականից - 2027-2028 թվականներին՝ շարաթական չվերթների 1-անգամյա և 2029-2030 թվականներին՝ 2-անգամյա պարբերականություն: Եվրոպական տնտեսական գոտի և Շվեյցարիա - քնդիանուր 4 ուղղություն մինչև 2030 թվականը - սկսած 2026 թվականից - 2026-2028 թվականներին՝ շարաթական չվերթների 1-անգամյա և 2029-2030 թվականներին՝ 2-անգամյա պարբերականություն: Հոնկոնգ-քնդիանուր 1 ուղղություն մինչև 2030 թվականը - սկսած 2029 թվականից - հաճախականությունը շարաթական 0.5 անգամ (երկու շաբաթը մեկ անգամ) ԱՄՆ - քնդիանուր 1 ուղղություն մինչև 2030 թվականը - սկսած 2027 թվականից - 2027 թվականին շարաթական թոփքների 0.5 անգամ պարբերականություն (երկու շաբաթը մեկ անգամ), հետագա տարիներին շարաթական 1-անգամյա պարբերականություն Մեծ Բրիտանիա - քնդիանուր 1 ուղղություն մինչև 2030 թվականը - սկսած 2030 թվականից - հաճախականությունը շարաթական 0.5 անգամ (երկու շաբաթը մեկ անգամ)	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն							0	0	2,190,240,000	6,489,600,000	14,277,120,000	11,072,880,000
M2.3.2	Աջակցել թիրախային շուկաներում պահեստների, պահեստային հարերի ձևավորմանը մատակարարման պայմանագրերի կնքման միջոցով՝ արտահանման գործընթացն արդիականացնելու և արտահանման ռիսկերսֆիկացիան խթանելու համար	Թիրախային շուկաներում պահեստները կարող են հեշտացնել փաթեթավորման, պիտակավորման և այլ, ավելացված արժեք ստեղծող ծառայությունների գործընթացները՝ դրանով իսկ նվազեցնելով տրանսպորտային ծախսերը և բարձրացնելով արդյունավետությունը: Պահեստների քնդիանուր թիվը բաշխվում է M. 2.3.2 և M. 2.3.5 միջոցառումների միջև: Ինդուրում ենք նկատի ունենալ, որ պահեստների քնդիանուր թիվը մինչև 2030 թվականը բաշխվել է նպատակային շուկաներում հետևյալ կերպ. Պարսից ծոցի երկրներ x1 Եվրոպական տնտեսական գոտի և Շվեյցարիա x3 ԱՄՆ x2 Միջին Արևելքի տարածաշրջանի երկրների մասով, կարող է առավել արդյունավետ լինել ստեղծել շահագրգիռ մասնավոր ընկերությունների մասնակցությամբ կոնսորցիումային հիմունքներով տարածաշրջանային հաբեր, որոնք կոնսենս պահեստային տարածքներ և սպասարկող անձնակազմ: Հաշվի առնելով ՀՀ և տարածաշրջանի երկրների առևտրատնտեսական ցուցանիշները առավել նպաստավոր կարող է լինել նաև տարածաշրջանային հաբեր հիմնել Արաբական Միացյալ Էմիրություններում (Աբու Դաբի կամ Դուբայ) և Իրաքյան Գուրդիստանում (Էրբիլ), որոնք միևնույն ժամանակ կսպասարկեն հարևան շրջանները կամ երկրները:	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	422,150,000	861,190,000
M2.3.3	Իրականացնել իրագործելիության հետազոտություն Զվարթնոց և Շիրակ օդանավակայանների համար՝ Հայաստանը հիմնական շուկաների միջև բեռնափոխադրումների տարանցիկ հանգույց դարձնելու հնարավորության ուսումնասիրության ու համաշխարհային առևտրային լոգիստիկայում Հայաստանն առանցքային դերակատար դարձնելու պայմանների ստեղծման նպատակով	Նշյալ հետազոտությունը կարևոր քայլ է ծրագրի գործնականության և կենսունակության գնահատման համար: Այն գնահատում է տարբեր գործոններ, ինչպիսիք են շուկայի պահանջարկը, ֆինանսական հետևանքները, կարգավորող դաշտի համապատասխանությունը և տեխնիկական պահանջները: Առանց այս խորը վերլուծության ղվվար կլինի հասկանալ, թե արդյոք նախագիծը իրագործելի է և ուսգնավարական առումով հիմնավորված: Իրագործելիության ուսումնասիրությունն օգնում է բացահայտել հնարավոր ռիսկերը, հաշվարկել ծախսերը և օգուտները՝ նպաստելով, որ հանգույց կառուցելու որոշումը լինի հիմնավորված, հաշվի առնի ծրագրի հնարավոր մարտահրավերները և հիմնվի հնարավորությունների խորքային պատկերացման վրա:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն							0	117,000,000	117,000,000	0	0	0
M2.3.4	Մշակել դեպի ընտրված շուկաներ ծախսարդյունավետ և հուսալի լոգիստիկ երթուղիներ՝ հաշվի առնելով այդ շուկաների համար ընտրված ապրանքների առանձնատեսությունները	Օրինակ՝ Հայաստանից Իրանի տարածքով դեպի Իրաք ապրանքների արտահանման երթուղիների հստակեցման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ ընթացակարգերի պարզեցման, թիրախային ապրանքային խմբերի նոյնականացման մասով: Հաշվի առնելով՝ Հայաստան-Իրան-Իրաք եռախորմ ձևաչափով տնտեսական և լոգիստիկ համագործակցության սկզբնավորման ուղղությամբ արդեն իսկ տարված աշխատանքները՝ Հայաստանի, Իրաքի և Իրանի ԱԳ-նախարարությունների համապատասխան տարածքային վարչությունների կողմից:	Էկոնոմիկայի նախարարություն							96,600,000	57,960,000	51,520,000	19,320,000	15,000,000	15,000,000

M2.3.5	Տրամադրել ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան աջակցություն արտահանման վտահելի օպերատորներին՝ ընտրված շուկաներում լոգիստիկ կենտրոններ (պահեստներ և տեղաբաշխման կենտրոններ), առևտրային տներ ձևավորելու համար՝ հիմք ընդունելով նրանց կողմից ներկայացված մանրամասն գործարար ծրագիրը	Մույն միջոցառումը կարող է ներառել հետևյալը. Արտահանման ֆիրմայային շուկաների բացահայտում և ընտրություն, որտեղ կստեղծվեն կամ կօգտագործվեն լոգիստիկ կենտրոններ: Նշվածի համար դիտարկվում են հետազոտության շրջանակներում բացահայտված ֆիրմայային շուկաները: Արտահանման վտահելի օպերատորների բացահայտում, որոնք ունեն հեղինակություն և կարող են արդյունավետ կերպով օգտագործել լոգիստիկ կենտրոններն ընտրված շուկաներում: Ընտրված արտահանման օպերատորներից պահանջել ներկայացնել մանրամասն գործարար ծրագիր՝ ընտրված շուկաներում լոգիստիկ կենտրոններ (պահեստներ և տեղաբաշխման կենտրոններ) ստեղծելու կամ օգտագործելու համար: Գնահատել ներկայացված գործարար ծրագիրը, դրանց համապատասխանությունը ներկայացվող չափանիշներին և հաստատել: Գնահեստների ընդհանուր թիվը բաշխվում է M. 2.3.2 և M. 2.3.5 միջոցառումների միջև: Գնահեստների ընդհանուր թիվը մինչև 2030 թվականը բաշխվել է նպատակային շուկաներում հետևյալ կերպ. Ծոցի երկրներ -1; Եվրոպական տնտեսական գոտի և Շվեյցարիա -3; ԱՄՆ-2	Ներդրումների աջակցման կենտրոն							0	0	121,730,000	149,000,000	177,310,000	206,690,000
M2.3.6	Մուտքարկել ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան աջակցություն՝ ընտրված շուկաներում առևտրի տներ ձևավորելու համար: Մասնավորապես, այս միջոցառումը ենթադրում է տրամադրել 30% սուբսիդավորում ընտրված շուկաներում առևտրի տների շահագործման առաջին տարվա ընթացքում գործառնական ծախսերը հոգալու համար՝ հիմնվելով մանրամասն մշակված գործարար ծրագրի վրա	Առևտրի տների ընդհանուր թիվը բաշխվել է M.2.3.5 և M. 2.3.6 միջոցառումների միջև: Առևտրի տների ընդհանուր թիվը մինչև 2030 թվականը ներառում է հետևյալ ֆիրմայային շուկաները. Ծոցի երկրներ x1 Եվրոպական տնտեսական գոտի և Շվեյցարիա x2 ԱՄՆ x2	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	60,870,000	86,920,000	50,660,000	116,260,000
M2.3.7	Մշակել և իրականացնել ծրագիր՝ ուղղված Հայաստանի Հանրապետությանը պատկանող, արտասահմանում առկա պետական գույքի արդյունավետ օգտագործումը		Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	0
Հիմնադրում 3	Արտահանողների և նրանց կարողությունների զարգացում									117,000,000	273,000,000	317,550,000	384,310,000	902,360,000	1,371,402,581
P3.1	Առևտրային կարողությունների զարգացում									117,000,000	273,000,000	205,390,000	296,640,000	589,030,000	948,350,000
M3.1.1	Կենտրոնացված տարրերակով ապահովել ներկա և ապագա արտահանողների կարողությունների զարգացման ծրագրի իրականացումը		Ներդրումների աջակցման կենտրոն							117,000,000	273,000,000	87,190,000	90,740,000	94,430,000	99,550,000
M3.1.2	Իրականացնել վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագրեր արտահանողների համար՝ առևտրի հետ կապված կանոնակարգերի ու ընթացակարգային խոչընդոտների, ռիսկերի գնահատման, համապատասխանության լավագույն փորձի և առևտրի ֆինանսավորման վերաբերյալ	Այս միջոցառման իրականացման նպատակով պետք է նախատեսել վերապատրաստում անցկացնող մասնագետների հաստիքակազմ/ստորաբաժանում իրականացնող/պատասխանատու մարմնի համար՝ կարողությունների համապատասխան կրթական պրոցեսն ապահովելու նպատակով	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	8,200,000	15,900,000	30,100,000	45,000,000

[illegible]

P.3.2	Նորարարության և որակյալ արտադրանքի զարգացման պետական նախաձեռնություն									0	0	0	0	184,400,000	241,830,000
M3.2.1	Իրականացնել պետական ծրագիր՝ բարելավելու արտադրանքի որակը նոր հետազոտությունների, զարգացման և նորարարության (RD&I) նախաձեռնությունների միջոցով՝ ձևավորելով արտահանման հետ կապված նորարարական կենտրոններ, ինկուբատորներ և արժեքաշարքներ՝ արտահանման ուղղված գործունեությամբ զբաղվող սթարթափներին և սթեյլափներին անհրաժեշտ ենթակառուցվածքներով, ռեսուրսներով և մենթորությամբ ապահովելու նպատակով	Այս միջոցառման նպատակն է երկրում ստեղծել նորարարական կենտրոններ, որոնք նպատակ կունենան գեներացնել նորարարական գիտահետազոտական լուծումներ 25 բացահայտված առանցքային ապրանքների համար: Որպես օրինակ կարելի է նշել ծխախոտը, որը սահմանվել է որպես Հայաստանից արտահանման առանցքային ապրանքներից մեկը: Այս միջոցառումը կարող է նպաստել ծխախոտի նոր արտադրության մեկնարկին, որը համատեղելի կլինի, օրինակ՝ տաքացման տեխնոլոգիաների հետ: Դրա մեկ այլ օրինակ է HS-ի նույն ծածկագրերով տարբեր կոկտեյլային ըմպելիքների արտադրությունը, որոնք սահմանվել են 25 առանցքային ապրանքների շարքում:	Էվոլյուցիայի նախարարություն							0	0	0	0	184,400,000	241,830,000
P.3.3	Առևտրի հետ կապված կրթական քաղաքականություն									0	0	112,160,000	87,670,000	128,930,000	181,222,581
M3.3.1	Նպաստել բարձրագույն կրթական ծրագրերի շրջանակներում արտահանման կառավարման նոր մոդուլների մշակմանն ու ներդրմանը՝ միջազգային լավագույն փորձի տեղախաղման միջոցով	Այս միջոցառումը կարող է ներառել հետևյալը. Կարիքների գնահատման իրականացում. գնահատել արտահանման կառավարման մասով կրթության ոլորտում առկա բացերը և բացահայտել տնտեսության ու պոտենցիալ ուսանողների հատուկ կարիքները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Ծրագրի ուսումնական պլանի՝ մրցութային հիմունքներով ընտրություն. ընտրել ուսումնական պլան Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակված նոր ծրագրերի համար, ներառյալ՝ դասընթացի բովանդակությունը, դասավանդման մեթոդները և անհրաժեշտ ռեսուրսները, ապահովել տնտեսության ստանդարտներին ու կարիքներին դրանց համապատասխանությունը: Կրթական հաստատությունների հետ համագործակցություն. համագործակցել համալսարանների, քոլեջների և այլ ուսումնական հաստատությունների հետ՝ նոր ծրագրերն իրենց առաջարկված կրթական ծրագրերին ինտեգրելու կամ նոր ծրագրեր ստեղծելու համար: Ֆինանսավորում՝ ծրագրերի մշակմանն ու իրականացմանն աջակցելու համար՝ հաշվի առնելով դրամաշնորհների, սուբսիդիաների կամ ֆինանսական աջակցության այլ մեխանիզմների հնարավորությունները: Ծրագրերի մեկնարկ և առաջխաղացում. պաշտոնապես գործարկել կրթական ծրագրերը և խթանել դրանց տարածումը պոտենցիալ ուսանողների ու ոլորտի շահակիցների շրջանում՝ արշավների ու իրազեկման աշխատանքների միջոցով: Մշտադիտարկում և գնահատում. հետևել ծրագրերի իրականացմանն ու արդյունավետությանը՝ գնահատելով դրանց ազդեցությունն ուսանողների և տնտեսության վրա: Հավաքագրել հետադարձ կապ՝ համոզվելու, որ ծրագրերը համապատասխանում են իրենց նպատակներին: Հնչդրություն և բարելավում. հետադարձ կապի և գնահատականների հիման վրա անհրաժեշտ ճշգրտումներ կատարել ծրագրերում՝ դրանց արդյունավետությունն ու արդիականությունը բարձրացնելու համար:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն							0	0	41,950,000	21,400,000	16,370,000	11,130,000

M3.3.2	Կիրառել խթաններ համալսարանների համար՝ համագործակցելու ոլորտի գործընկերների, առևտրային ասոցիացիաների և պետական գործակալությունների հետ՝ առաջարկելու փորձնակության, դաշտային նախագծերի ու հյուրընկալված դասախոսների կողմից դասախոսությունների հնարավորություններ, որոնք ուսանողներին տրամադրում են առևտրի փորձառության և դրա մարտահրավերների վերաբերյալ իրական, գործնական գիտելիքներ	Համալսարանների համար խթանները կարող են ներառել հետևյալը. Ֆինանսավորում և դրամաշնորհներ- համատեղ նախաձեռնություններին ֆինանսական աջակցության տրամադրում Հասցում և մրցանակներ- համագործակցության ակնառու արդյունքների խրախուսում մրցանակների կամ հանրային ծանայման միջոցով Կարիերայի աճ- ուսնակության և զբաղվածության ծառայությունների խթանում Համատեղ նախագծեր- համատեղ դաշտային կամ խորհրդատվական նախագծերի համար հնարավորությունների ստեղծում Հրավիրյալ դասախոսություններ և սեմինարներ- ոլորտի մասնագետների՝ ակադեմիական միջոցառումներին մասնակցության փոխհատուցում Մասնագիտական զարգացում- ուսուցիչների և ուսանողների համար վերապատրաստման ու փոխմանական ծրագրերի առաջարկների ներկայացում Երկարաժամկետ գործընկերություն- երկարաժամկետ պայմանագրերի կնքում և շարունակական համագործակցության համար խորհրդատվական մարմինների ստեղծում:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն							0	0	0	0	62,850,000	119,392,581
M3.3.3	Ձիննը արտահանման բարձր ներուժ ունեցող ոլորտներում ներգրավված աշխատուժին անհրաժեշտ հմտություններով՝ նրանց աշխատունակությունը բարձրացնելու համար	Այս միջոցառումը կարող է ներառել հետևյալը. Հմտությունների րացերի գնահատում-տվյալների հավաքագրման համար հարցումների և հարցազրույցների օգտագործում, հմտությունների մասով առկա րացերի վերլուծության իրականացում Նպատակային ուսումնական ծրագրերի՝ մրցութային հիմունքներով ընտրություն-ուսումնական հաստատությունների կողմից մրցութային հիմունքներով մշակված կոնկրետ ոլորտների ուսումնական պլանների ընտրություն, ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն, առցանց ուսուցման հարթակների ստեղծում կամ օգտագործում Անձնակազմի զարգացման ծրագրերի իրականացում-բարձր ներուժ ունեցող ոլորտների համար ուսումնական կենտրոնների ստեղծում, փորձառության և աշակերտության խրախուսում Տնտեսության և գիտական շրջանակների միջև համագործակցության ամրապնդում-ոլորտի փորձագետների մասնակցությամբ խորհրդատվական մարմինների ստեղծում, համատեղ հետազոտական նախագծերի խրախուսում Իրազեկվածության ու ներգրավվածության բարձրացում-վերապատրաստման ծրագրերի համար մաքրեթինգային արշավների իրականացում, աշխատուժին վերաբերվող նախաձեռնություններին աջակցելու համար շահակիցների ներգրավում	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	0	0
M3.3.4	Բարեփոխել Հայաստանի մասնագիտական (նախնական մասնագիտական և միջին մասնագիտական) կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) համակարգը ՄԿՈԻ ուսումնական ծրագրերի վերանայման միջոցով՝ ընդգրկելու նորարար տեխնոլոգիաներն ու ոլորտին հատուկ հմտությունները՝ ներառելով ավելի գործնական ուսուցում և աշխատանքի վրա հիմնված ուսուցման հնարավորություններ՝ կապված միջազգային քիզենս գործունեության հետ	Միջոցառումն իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության և ԿԳՄՍ նախարարության համագործակցությամբ՝ հաշվի առնելով ոլորտային ուսումնասիրությունները՝ ներգրավելով ՄԿՈԻ հաստատությունները:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն							0	0	70,210,000	66,270,000	49,710,000	50,700,000

Հիմնայուն 4	Շուկաների և հաճախորդների ընդլայնում										218,000,000	281,000,000	972,080,000	1,160,080,000	2,248,000,000	2,766,030,000
P4.1	Շուկայի ուսումնասիրության և շուկա մուտք գործելու ծրագիր										213,000,000	265,000,000	647,080,000	871,080,000	1,247,000,000	1,684,870,000
M4.1.1	Իրականացնել Արտահանման առավելության բարձրացման նախաձեռնություն՝ արտերկրում բիզնեսը-բիզնեսին (B2B) ցուցահան-դեսների համակարգումը, կազմակերպումը և համաֆինանսավորումը բարելավելու նպատակով	Այս միջոցառման նպատակն է բարձրացնել ավանդական ցուցահանդեսներին հայ արտահանողների մասնակցության արդյունավետությունը: B2B հանդիպումները հանդիսանում են ավելի արդյունավետ միջոց, և հայկական բիզնեսները պետք է առաջին հերթին կենտրոնանան այս տեսակի հանդիպումների կազմակերպման վրա: Կառավարությունը պետք է աջակցի նշյալ միջոցառումներին, այդ թվում՝ Հայաստանում միջազգային գնորդներին հյուրընկալելու և հայ արտադրողների արտասահման այցելությունների դյուրացմանը:	Էկոնոմիկայի նախարարություն								160,000,000	200,000,000	210,000,000	231,000,000	250,000,000	262,000,000
M4.1.2	Խթանել ԱՊՀ-ից և ԵԱՏՄ-ից բացի ընտրված արտահանման շուկաների մասին շուկայական հետազոտությունների ձեռքբերումը՝ (մատակարարման շղթա, գործընկեր երկրների ներկայացուցիչներ, շուկայի առանձնահատկություններ, առևտրի կանոնակարգեր, արտադրանքի բնութագրեր և կարիքներ) միջազգային հետազոտական ընկերություններին դրանց արտապատվիրման միջոցով՝ առաջարկելով շուկայական հետազոտության արժեքի հետվճարի (cashback) խթան՝ 30% անհատական շուկայական հետազոտությունների և 50% օմնիբուս շուկայական հետազոտությունների դեպքում		Էկոնոմիկայի նախարարություն								14,000,000	16,000,000	19,000,000	23,000,000	26,000,000	29,000,000
M4.1.3	Ձևավորել խթաններ ընտրված շուկաներում արդեն իսկ վաճառքներ իրականացնող տեղական արտահանողների համար՝ խրախուսելով նրանց սկսել արտահանել նաև առանցքային ապրանքներ այս շուկաներ՝ հիմնվելով ապրանքի տարածության (product space) սկզբունքի վրա	Այս միջոցառումը կարող է ենթադրել հետևյալը. Առանցքային 25 ապրանքների և դրանց համար շուկաների քաջահայտում. այս փուլում պետք է կենտրոնանալ առանցքային 25 ապրանքների և դրանց համար սահմանված թիրախային շուկաների վրա: Մշակել խթանների կառուցվածքային շրջանակ. նշվածը կարող է ներառել ֆինանսական դրամաշնորհներ, օժանդակ մեկնախիզմներ՝ արտահանողներին խրախուսելու ծանոթանալ առանցքային ապրանքների հետ և արտահանել դրանք: Պետական ֆինանսավորման և ռեսուրսների հատկացում. այս փուլը ենթադրում է պետական ֆինանսավորման և ռեսուրսների հատկացում խրախուսման ծրագրի աջակցության համար: Խթանման ծրագրի առաջխաղացում. նշվածը ենթադրում է արշավի նախաձեռնում՝ նոր արտահանողներին իրազեկելու նոր արտոնությունների մասին՝ ներառյալ այն, թե ինչպես կարելի է օգտվել ծրագրից և դիմել դրան մասնակցելու համար: Համակարգել և կառավարել խթանների տրամադրման գործընթացը. նշվածը ենթադրում է ծրագրի այն փուլը, երբ մշակվում են հայտերը՝ հատկացնելով միջոցներ կամ տրամադրելով աջակցության այլ ձևեր, ինչպես նաև ապահովելով, որ արտահանողները համապատասխանեն ծրագրի պահանջներին: Ազդեցության մշտադիտարկում և գնահատում. այս փուլում ենթադրվում է հետևել խթանման ծրագրի արդյունավետությանը՝ վերահսկելով առանցքային ապրանքների արտադրությունն ու արտահանումը: Դրա շրջանակներում գնահատվում է ծրագրի ազդեցությունը շուկայի ներթափանցման և արտահանման աճի վրա: Հետադարձ կապի հավաքագրում և վերանայումների իրականացում. ծրագրի մասնակիցների և շահակիցների հետադարձ կապի հավաքագրում՝ բացահայտելու ծրագրի հաջողության դեպքերը և բարելավման ենթակա ոլորտները: Նշվածը ենթադրում է նաև ծրագրի թարմացում՝ հիմնվելով հավաքագրված հետադարձ կապի վրա՝ ծրագրի արդյունավետությունն ու կայունությունը բարձրացնելու համար:	Էկոնոմիկայի նախարարություն								0	0	0	0	159,000,000	180,000,000

M4.1.4	Տրամադրել ֆինանսական աջակցություն փոխադարձ այցելությունների համար՝ թիրախային շուկաներում հավանական գործընկեր երկրների ներկայացուցիչների հետ հարաբերությունների զարգացման և ամրապնդման համար՝ համաֆինանսավորելով այցելության ծախսերի մինչև 40%-ը	Այս միջոցառումը կարող է ենթադրել հետևյալը: Ծրագրի ուղեցույցների մշակում- ծրագրի մանրամասն ուղեցույցների մշակում՝ ներառյալ ընտրության չափանիշները, դիմումի ընթացակարգերը և փոխադարձ այցելությունների համաֆինանսավորման հատուկ պայմանները (ծախսերի մինչև 40%): Ֆինանսավորման ապահովում- պետական միջոցների հատկացում՝ այցելության ծախսերի մինչև 40%-ը փոխհատուցելու համար: Ծրագրի խթանում- իրազեկման արշավի գործարկում՝ ձեռնարկություններին ու կազմակերպություններին տեղեկացնելու, որ գործում է ֆինանսական աջակցություն փոխադարձ այցելությունների համար՝ ներառյալ այն, թե ինչպես դիմել և ինչ ծախսեր են նախատեսված: Դիմումների գործընթացի համակարգում- այս փուլում պետք է դիտարկել և հաստատել այն ձեռնարկությունների կամ կազմակերպությունների հայտերը, որոնք ֆինանսական աջակցության կարիք ունեն փոխադարձ այցելություններ իրականացնելու համար: Այս մասով հարկավոր է համոզվել, որ հայտերը համապատասխանում են ծրագրի չափանիշներին և սահմանված նպատակներին: Միջոցների բաշխում- հաստատված թեկնածուներին ֆինանսական միջոցների տրամադրում՝ ծածկելով փոխադարձ այցելության հետ կապված ծախսերի մինչև 40%-ը: Այցելությունների մշտադիտարկում և աջակցություն- այցելությունների իրականացման մշտադիտարկում՝ ապահովելու, որ դրանք համապատասխանում են ծրագրի ուղեցույցներին, և առաջացած ցանկացած խնդիր հասցեագրվում է: Ծրագրի արդյունավետության գնահատում- փոխադարձ այցելությունների՝ պոտենցիալ գործընկերների հետ կապերի զարգացման և ամրապնդման վրա ազդեցության գնահատում, ինչպես նաև մասնակիցների արձագանքների հավաքագրում՝ ծրագրի հաջողությունը գնահատելու ու բարելավման ոլորտները բացահայտելու համար: Կատարելագործում և քարելավում- հետադարձ կապի և գնահատման արդյունքների օգտագործում՝ ծրագրում փոփոխություններ կատարելու, դրա արդյունավետությունը բարձրացնելու և հետագա փոխադարձ այցելությունների ժամանակ ավելի արդյունավետ աջակցություն ապահովելու համար: Արտահանման խորհուրդը պատասխանատու է լինելու փոխադարձ այցելությունների չափանիշների և ուղեցույցների սահմանման համար, ներառյալ՝ նպատակների սահմանումը, գնահատման հիմնական բաղադրիչների որոշումը և այցելությունների ընթացակարգերի սահմանումը: Նշվածը կարող է ապահովել փոխադարձ այցելությունների իրականացման համակարգված և հետևողական մոտեցում՝ հստակ ստանդարտների պահպանմամբ և աշխատանքային խմբի վերահսկողության ներքո՝ արդյունավետությունն ապահովելու համար:	Էկոնոմիկայի նախարարություն						39,000,000	49,000,000	52,000,000	59,000,000	77,900,000	102,600,000	
M4.1.4	Ուսումնասիրել և տրամադրել առանցքային ապրանքների վերաբերող միջազգային ցուցանիշների ամբողջական ցուցակ		Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	0	0
M4.1.5	Ապահովել ԱՀԿ պահանջներին համապատասխան ֆինանսավորում ներկայացված ցանկից ընտրված միջազգային ցուցանիշների մասնակցության ծախսերի 30%-ի (առկա շուկաների դեպքում) ու 50%-ի (սոր շուկաների դեպքում) չափով և թիրախային շուկաներում հավանական գործընկեր ընկերությունների հետ կնքված պայմանագրերի համար 10 տոկոսային կետով ավելացման հնարավորությամբ, եթե պայմանագրի արժեքը կազմում է նախորդ տարվա արտահանման ծավալի առնվազն 10%-ը (տուրքադասյուր հաջորդ պայմանագրի համար լրացուցիչ 2 տոկոսային կետով ավելացման հնարավորությամբ, եթե պայմանագրի արժեքը կազմում է նախորդ տարվա արտահանման ծավալի առնվազն 5%-ը)		Էկոնոմիկայի նախարարություն						0	0	366,080,000	558,080,000	650,600,000	944,270,000	


M4.1.7	Ապահովել առաջատար միջազգային հետազոտական հաստատությունների տեղեկատվությանը, զեկոյցներին և տվյալներին մշտական հասանելիություն, որոնք վերլուծում են շուկայի միտումներն ու առանցքային ապրանքների ապագա ակնկալիքները	Քվազի բորսայական ապրանքների ոլորտում ռազմաթիվ հեղինակավոր միջազգային հետազոտական ինստիտուտներ իրականացնում են բարձրորակ հետազոտություններ՝ շուկայի միտումներ և ապագա սպասումներ դիտարկելու համար: Այս հաստատություններն օգտագործում են առաջադեմ վերլուծական գործիքներ և մեթոդաբանություններ՝ ապրանքային շուկաների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու համար՝ ներառյալ գների, առաջարկի ու պահանջարկի դինամիկան և աշխարհաքաղաքական գործոնները, որոնք կարող են ազդել ապրանքների գների վրա: Հայաստանի համար չափազանց կարևոր է ձեռք բերել նման հաշվետվություններ, հատկապես նրանք, որոնք նվիրված են առանցքային ապրանքներին: Ձեռք բերելով այս հաշվետվությունները՝ հայկական կազմակերպությունները հնարավորություն կունենան օգտվել արժեքավոր տվյալներից և կանխատեսումներից, ինչը թույլ կտա նրանց տվյալահենք որոշումներ կայացնել ապրանքների գնումների, առևտրային ռազմավարությունների և շուկայում դիրքավորման վերաբերյալ: Այդ հաշվետվություններին հասանելիությունը ոչ միայն կբարձրացնի Հայաստանի կարողությունը՝ խուսափելու համաշխարհային ապրանքային շուկաների բարդություններից, այլև կաջակցի նրա ռազմավարական տնտեսական պոտենցիալները և զարգացման նախաձեռնություններին: Բացի այդ, այս բարձրակարգ հետազոտական զեկոյցներում պարունակվող տեղեկատվության օգտագործումը կարող է նպաստել ավելի արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակմանն ու ներդրումային որոշումների կայացմանը, ինչը, ի վերջո, կնպաստի երկրի տնտեսական կայունությանը և աճին:	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	25,000,000	50,000,000
M4.1.8	Կազմակերպել, հյուրընկալել նշված քվազի բորսայական ապրանքների վերաբերյալ միջոցառումներ, կոնֆերանսներ և աշխատանքային հանդիպումներ Հայաստանում՝ նպատակ ունենալով Հայաստանը դարձնել այդ ապրանքների առանցքային կենտրոն՝ օգտագործելով առաջխաղացման ու կապերի հաստատման հնարավորությունները	Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բացահայտված առաջնահերթ 25 ապրանքների ցանկում հայտնված քվազի բորսայական ապրանքներին:	Էկոնոմիկայի նախարարություն							0	0	0	0	58,500,000	117,000,000
P4.2	Ազգային բրենդների ստեղծում									5,000,000	16,000,000	325,000,000	289,000,000	1,001,000,000	1,081,160,000
M4.2.1	Բանակցել Իփսոս՝ շուկայի հետազոտական և խորհրդատվական համաշխարհային ընկերության հետ՝ Հայաստանը ներառելու Անհոլտ-Իփսոսի Ազգային բրենդի ինդեքսի համառոտացման		Էկոնոմիկայի նախարարություն							5,000,000	16,000,000	0	0	0	0

